



ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Այստեղից հարմար է անցնել Սամսոն, որ կարող է նկատվել ծովային դուռը Սեբաստիայի նահանգի, և Մարգվանի, Ամասիայի ու Ծվդոկիայի վրայով գալ Սեբաստիա ու ընդգրկել ողջ նահանգը, որին վերաբերող և մեր ձեռքի տակ եղած նյութերը, ի դեպ, ոչ միայն նվաղ են, այլև խիստ անհամաչափ բաշխված։ Սամսոնի հայությունը առհասարակ երգասեր ու երաժշտասեր է ներկայացնում Օթոն Հեքիմյանը։ «Ժողովուրդը առհասարակ երաժշտասեր էր», — հիշում է նա։ «Ամեն բարեկեցիկ ընտանիքի տան մեջ դաշնակ մը կար, իսկ միջակ և համեստ վիճակի ընտանիքներու տան մեջ պակաս չէին ջութակ... մանդոլին, սրինգ, ուդ, քանոն, սաղ, դեֆ և այլն։ Կնվազվեին ու կերգվեին հայկական, եվրոպական, թրքական եղանակներ ու երգեր, մեծ խանդով»¹³²։ Երաժշտակրթական տեսակետից նույնպես Սամսոնի հայությունը նկատառնելի մեկ միջավայր է ներկայացրել իրենից։ «Մշակութային տեսակետով թաղն (իմա հայկականը) ուներ վարժարան մը մանչերու (և) երկու դպրոցներ աղջիկներու... Մանչերու վարժարանը... ուներ իր աշակերտութենեն կազմված նվագախումբ մը, որ թաղին մեջ տեղի ունեցող զանազան ժողովրդական հանդեսներուն կրեբեր իր մասնակցությունը»¹³³։ Բացի այս «ժողովրդական հանդեսներից», որոնք, փողային նվագախմբի մասնակցությամբ ունեցել են մասսայական բնույթ, Սամսոնում հայերը կազմակերպելիս են եղել նաև գեղարվեստական այլևայլ երեկույթ-ցերե-

կույթներ։ «Որպես ազգային ընկերական հավաքատեղի, թաղին մեջ կար ակումբ մը... Հոն տեղի կունենային բանախոսական, գեղարվեստական հավաքույթներ»¹³⁴։ Հայոց այս գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծվել են մանավանդ 1908-ից հետո, երբ Գրիգոր Սյունին էլ, այցելելով այստեղ, քառաձայն երգախումբ է կազմել ու ոգեշնչող համերգներ տվել։ «Ազատության երջանկավետ տարիններուն... ունեցանք նաև կովկասահայ երաժշտագետ երգահան Գրիգոր Սյունինին, որ հայոց թաղի երկսեռ երիտասարդութենեն կազմեց բազմանդամ երգախումբ մը»... Պարզվում է, որ Սյունիի «սարքած նվագահանդեսները... հիացում կաղդեին Սամսոնի հայ, հույն, թուրք, հրեա, ինչպես նաև տեղվույն եվրոպական գաղութին երաժշտասեր հասարակության»։ Իվերջո՝ այստեղից փայլատակելով անցել է նաև Դավիթ Դավթյանը։ «Զեմ ուղեր մոռնալ նաև նշանավոր... ջութակահար... ողբացյալ Դավիթ Դավթյանը, Տրապիզոնցի, ուսած վենետիկ և Բրյուսել, որուն նվագածությունները (recital) մեծ թատրոնին մեջ, համբավվոր եվրոպացի հեղինակներու գլուխ-դորձոցներեն ինչպես նաև իր իսկ հեղինակություններեն... հայ և օտարազգի հանդիսականներու հոծ բազմություն խանդավառ ծափահարություններուն... և «կեցցե»-ներուն կարժանանային»¹³⁵։ Ի դեպ, այստեղից Դ. Դավթյանը անցնում է Մարդվան... «Ամերիկյան կոլեջի երիտասարդ աշակերտության խնդրալի հրավերին գոհացում տալու...»¹³⁶։ Եվ տաղանդավոր երաժիշտը Մարդվանում նույնպես գտնում է

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ-ից, Գ-ից, Զ-ից և Է-ից։

¹³² Հեքիմյան Օ., Սամսոնի հայության տխուր բաժինը 1915—1918-ի մեծ եղեռնին, Փարիզ, 1961, էջ 26։

¹³³ Անդ, էջ 21—22։

¹³⁴ Անդ, էջ 23։

¹³⁵ Անդ, էջ 24։

¹³⁶ Անդ,

իր արվեստը ջերմորեն ընկալել ու բարձր գնահատել իմացող հանդիսականների, որ բնավ պատահական չի կարող նկատվել, իր շրջապատի հայության ակթական վառարանը»¹³⁷ համարված Մարդվանը, ըստ բոլոր տվյալների, երաժշտա-կրթական տեսակետից ևս փայլել է ժամանակին, շնորհիվ Ադդային ճանարանի և (աղջիկների) Հռիփսիմյանց վարժարանի նման լուսավորյալ օջախների, ինչպես նաև՝ մանավանդ՝ տեղվույս Ամերիկյան հուշակավոր կոլեջի բազմաբնդուն գործունեությունը, Ցավոք, սակայն, այս մասին մանրամասն տեղեկություններ տալու պահված չեն։ Այն է միայն հայտնի, թե կոլեջիս ուսուցչապետը (պրոֆեսոր) երաժշտության գծով, եղել է շնորհալի մեկ հայ, որի մասին հետևյալ տեղեկությունը գտանք Ապրիլի 11-ի հուշարձանում. «Պրոֆեսոր Արշակ Տաղյան, 40 տարու, կոլեջական, Շուտուդարդի և Բեռլինի երաժշտանոցներում մեջ զարգացած, հեղինակ Չուլիալաբ անուն երաժշտական երկի մը՝ գնահատված գերման գեղարվեստի աշխարհին, երաժշտության և գծագրության ուսուցիչ Մարդվանի կոլեջին։ Տարագրության շրջանին՝ անհետ»¹³⁸։ Ս. Մոցիկյանին էլ ծանոթ է, սակայն, այս ուսուցչապետ-արվեստագետը, որ և վկայում է նրա «եղերական վախճանը»¹³⁹, նույնպիսի ճակատագիր են ունեցել կոլեջիս մյուս հայ ուսուցչապետներից մի քանիսը ևս, և, որոշ իմաստով, անգամ ողջ կոլեջը, որ 1895-ի դեպքերին «բավական» վնասված է եղել. իսկ 1915-ի տեղահանությանց ժամանակ՝ «բոլորովին» գոցվել է¹⁴⁰։ Այս առթիվ պիտի նշել վերջապես, թե հետամնաց Թուրքիայում լուսավորական-առաքելական նպատակներով հաստատված սուլյն կոլեջների դռները ժամանակին բաց են եղել բոլորի համար էլ անխտիր։ Եվ չնայած նրան, որ Թուրքիայում հենց հայկական դպրոցներն իսկ «տաճկականներից թվով ավելի և որակով բարձր» են եղել¹⁴¹, հիշյալ կոլեջների ուսանողության մեծ մասը դարձյալ հայեր են կաղմել, որպիսի պատճառով էլ, հայոց լեզվի ուսուցումը ընդունվել և օրինականացվել է այդ կրթարաններում։ Ավելին, շատ դեպքերում, նույն այդ կոլեջների ուսուցչական կազմը ևս, մեծավ մասամբ, հայերից է բաղ-

կացած եղել, ինչպես պարզ արձանագրված է շատ հուշամատյաններում։ Մարդվանի հայության երաժշտական կյանքի և երգ-երաժշտության մասին ուրիշ ոչինչ չգիտենք։ Հատ ու կենտ տեղեկություններ է հաղորդում Մոցիկյանը Մարդվանի հայոց բարբառի, նրանց ուխտավայրերի, Ս. Աստվածածին հուշակավոր եկեղեցու և «հիներեն հայտնի» Գրիգոր դպրի մասին¹⁴², որոնք լոկ հուշարարների նշանակությունը կարող են ունենալ մեզ համար, այլ ոչ ուղղակի փաստերի։ Նույնը պիտի ասել նաև Ամասիայի հայության մասին նրա հաղորդած փաստերի կապակցությամբ առհասարակ¹⁴³, թիչ այլ է պարագան Եվգոկիո հայության նկատմամբ, որի ժողովրդական բանահյուսության և աշուղների վերաբերյալ նյութեր է հավաքել ու համագրել Ա. Ալպոյաճյանը։ «Դժբախտաբար Եվգոկիո հայերուն մեջ ժողովրդային բանահյուսության հայ լեզվով նմուշները շատ քիչ էին»—գրում է նա, նշելով, որ այդ բանահյուսության արժեքները ժամանակի ընթացքում հայերենից են թուրքերենի վերածված՝ այն է՝ թարգմանված եղել, մինչ 1908-ից հետո, հայոց լեզուն իր իրավունքների մեջ աստիճանաբար վերականգնվելիս է եղել... Օրոր, խրախճանքի, հարսանեկան և այլ երգեր... «բոլորը թուրքերենի վերածված էին, ինչպես թուրքերեն կերպով ընտանեկան հավաքովյալներում մեջ, մինչև 1908, ինչ որ ազգագրական տեսակետով մեծ կորուստ մըն է մեզի համար։ Անոնք թանկագին կարևորություն մը պիտի ունենային, քանի որ Եվգոկիո գավառաբարառը պոլսականների վերջը և թերևս նույնիսկ Իզմիրի բարբառեն առաջ, արևմտյան հայ աշխարհաբար լեզվին մերձավորագույնն էր»¹⁴⁴։ Այսուհանդերձ, Եվգոկիայի հայոց հայերեն օրորներից, մանկական, սիրային ու երգիծական երգերից մի քանիսի գրական տեքստերը բերվում են այստեղ¹⁴⁵։ Օրինակելի է, որ Ալպոյաճյանը ուշադրություն է դարձնում Եվգոկիո հայոց արհեստավորական շրջաններին հատուկ սիրող-երաժիշտների վրա ևս, նրանց էլ աշուղ անվանելով (թեև, խստորեն դատելով, նրանք բոլորն էլ աշուղներ չեն կարող համարվել)։ ...«մինչև 1915 Թուրքիայի մեջ, մասնավորապես, հարսանիքներու առթիվ, իբր նվագածու՝ արհեստավոր մարդիկ, իբր սիրող իրենց գործիքներով կնվագեին, երբեմն ալ ինքնաստեղծ և վայրկյանին տպավորության

¹³⁷ Մոցիկյան Ս., Արևմտայ աշխարհ, էջ 415:

¹³⁸ Հուշարձան (ապրիլ տասնմեկի), 4. Պոլիս, 1919, էջ 70:

¹³⁹ Մոցիկյան Ս., Նշված աշխատությունը, էջ 418:

¹⁴⁰ Անդ, էջ 415:

¹⁴¹ Անատյան Հ., Տաճկաստանի հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.) Նոր-Նախիջևն, 1915, էջ 67:

¹⁴² Մոցիկյան Ս., Նշվ. աշխ., էջ 416—419:

¹⁴³ Անդ, էջ 58—59:

¹⁴⁴ Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվգոկիո հայոց, Կահիրե, 1952, էջ 1533:

¹⁴⁵ Անդ, էջ 1539—1543:

տակ կհորինեին ներքողներ, հարսին, փեսին, ծնողներուն և կնքահայրին ձոնված»...¹⁴⁶։ Գալով բուն աշուղներին, հեղինակը գանգատվում է նյութի պակասությունից և դարձյալ՝ թրքախոսության դժբախտությունից... «Կհիշատակվին միայն մի քանի աշուղներ, որոնց անունները և երգերեն պատահորեն մասեր կմնան միայն։ Իսկ շատ շատեր անհիշատակ մնացած են... Կարծես թե աշուղները սիրած են թրքերեն երգել։ Ասոր պատճառները բազմաթիվ էին։ Առաջինը՝ թրքական բարբառությունն էր, որ տեղ-տեղ հայ լեզուն գործածելու արգելք կղներ, ահաբեկելով բնակչությունը։ Այս պատճառով, հանուն խոհմության, հայերը իրենց ուրախության և տրամադրության երգերը թրքերեն լեզվով երգել նախամեծար համարած են, չգրգռելու համար թուրք խուժանին զայրույթը։ Նույնպես կարելի է մտածել, թե քաղաքը ուներ նաև թուրք աշուղներ, որոնց հետ գործակցելու կամ հրապարակային մրցումներ կատարելու համար, հայ աշուղն ալ պարտավոր էր թրքերեն լեզուն կիրարկել։ Հավանական է, որ նաև հայ աշուղը իր երգը հասկանալի ընելու համար նախամեծար սեպած ըլլա թրքերեն երգել։ Այսպես... հայերենը տեղի տված է և մասամբ թրքերենը գրաված է հայերենի տեղը»¹⁴⁷։ Եվդոկիո հայոց հին (անցած հարյուրամյակին վերաբերող) աշուղներից նշանավոր է եղել Զայիֆին, որի «ինքնեբզություններից» շատերը երգվել են ուրիշ աշուղների կողմից ևս, ըստ Տրդատ Կալիսկի։ Պալյանի հաղորդած տեղեկությունները¹⁴⁸։ Երաժշտա-կրթական գործն այստեղ բարելավվել է, ըստ երևույթին, ներկա հարյուրամյակի առաջին տասնամյակում միայն, երբ Արտավազդ վրդ. Գալենդերյանը դպրաց դաս է կազմակերպել և ձայնագրություն է դասավանդել. և երբ Եվդոկիո հայկական դպրոցների համար հրավիրվել են երգ-երաժշտության կարող ուսուցիչներ՝ Միսաք Փանոսյանը, Արտաշես Զեմչեմյանն ու երաժշտագետ Կարապետ Շապճյանը¹⁴⁹։ Եվդոկյան ունեցել է նաև իր փողային նվագախումբը՝ Հիսուսյանց վարժարանի սաներից կազմված¹⁵⁰։ Վերջապես գալով Սեբաստիային՝ հայաբնակ հին ու կարևոր այս կենտրոնին, ցավով պիտի նշենք, որ մինչև օրս էլ հրատարակված չէ նրան վերաբերող

մեկ հուշամատյան¹⁵¹։ Կ. Գաբրիլյանը բոլորովին տարբեր մեկ նպատակադրում է ունեցել իր «Եղեռնապատումում», որից մեր նյութի համար, Սանասարյան վարժարանի ուսուցչական կազմի և աշակերտության բարբարոսական բնաջնջման մանրամասնությունները հնարավոր է քաղել միայն¹⁵²։ Այնպես որ առաջին հարկ է բավականանալ սոսկ այն փոքրաթիվ ընդհանուր տեղեկություններով, որոնք, Սեբաստիայի մասին, հաղորդում է Ս. Մոցիկյանը։ «Կոչունքներու և ուրախ հարկերու ժամանակ լավ կզվարձանան... երգելով ու պարելով»—գրում է նա՝ Սեբաստիայի հայերի մասին։ «Անոնց երգածը ազգային երգեր և կամ թուրքերեն խաղեր են ընդհանրապես։ Անոնք ունին տեղական հայ ժողովրդական ուրույն երգեր ևս»¹⁵³։ Վերջիններս երգվել են հատուկ բարբառով։ Սեբաստիո հայկական հոծ զանգվածները ունեցել են մի ամբողջ շարք հնագույն ուխտատեղիներ, յբոլոր շին ու պայծառ վիճակներով օժտված... Ս. Նշանը... «շինված ու շենցած Սեբաստիո տեղ Արծրունի Սենեքերիմ թագավորին ձեռամբ», որտեղ պահվելիս են եղել «Սենեքերիմի գահը, հնադարյան դանազան զարդարանքներ, սրբոց մասունքներ»... Ս. Հրեշտակապետը, ինդրակատար Աստվածածինը, Ս. Հակոբը, ... «Ս. Հակոբա, Մժրնա Հայրապետին» պատկերով, Քառասուն Մանկունքը՝ այն լճի եզրին, որում դրեր առաջ... «ձեռված, խեղճամահ եղած, նահատակված են 40 անմեղ մանկունքներ»... և այլն¹⁵⁴։ Սեբաստիո հայկական եկեղեցիներից նշանավոր է եղել Մայր տաճարը, որում եկեղեցական երգեցողություն էլ շատ պատշաճ մեկ մակարդակի վրա պիտի եղած լիներ, դատելով թեկուզ և այն փաստից, որ վերոհիշյալ Ս. Նշանի մեջ անցած հարյուրամյակի վերջերքում մի դպրոց է բացված եղել՝ «ուսյալ եկեղեցականներ պատրաստելու համար»¹⁵⁵։ Ընդհանուր կրթական տեսակետով էլ հայ Սեբաստիան լավ վիճակ է ունեցել։ Արդեն Սանասարյանը այստեղ մի «նոր զարկ» է տվել հայոց կրթական կյանքին։ Բացի այս, տեղում եղել են՝ Թարգմանչաց մեծ վարժարանը, Արամյան, Հռիփսիմյանց, Լուսինյան և Բեգիբյան կրթարանները, որոնցում երգ-երաժշտությունը բնավ ան-

¹⁴⁶ Անդ, էջ 1558։

¹⁴⁷ Անդ։

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 1560։

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 976։

¹⁵⁰ Տե՛ս այդ նվագախմբի նկարը՝ նույն տեղում, էջ 1590։

¹⁵¹ Ասում են՝ թե այդպիսին վաղուց իվեր պատրաստում է բանասեր Հ. Բերբերյանը։ Սպասում ենք։

¹⁵² Գաբրիլյան Կ., Եղեռնապատում Փոքուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիո, Բոստոն, 1924, էջ 565—567։

¹⁵³ Մոցիկյան Ս., Արևմտահայ աշխարհ, էջ 632։

¹⁵⁴ Անդ, էջ 644—646։

¹⁵⁵ Անդ, էջ 645։

տեսված չպետք է լինեի նկատառունքի պարագա է, թե Սեբաստիայի կապված անուններ են՝ չութակահար Հրանտ Գլըճյանը, դրող և երաժշտագետ Կարապետ Փայելյանը, ինչպես նաև երաժշտագետ Թադեոս Տերտիարյանը, որ և նահատակվել է այստեղ¹⁵⁶։ Ծթե մեկ կողմ թողնենք Սեբաստիոն նահանգի մի երկու մանրակենտրոնների մասին Մոցիկյանի հառաջ բերած տվյալները, օրինակ՝ Կամարակի Ս. Գեորգա վանքին (որին «թուրքեր իսկ մեծ պատկառանք կտածեին») և կամ՝ Կյուրինի հայոց կողմից «այլևայլ պարագաներու առթիվ» երգված ժողովրդական երգերին վերաբերող հատ ու կտոր փաստերը, ապա պետք է անցնենք դուցազնական Շաբին-Կարահիսարին և դրանով էլ ավարտված համարենք Սեբաստիայի նահանգի կապակցությամբ մեր ասելիքները։ Շաբին-Կարահիսարի նվիրված երկու հուշամատյան կա, և երկուսի մեջ էլ ավելի կարևորված է քաղաքիս հայոց աշուղական շնորհքը, թեև ժողովրդական երգ-երաժշտության մասին ևս տվյալներ հաղորդվում են, նույնիսկ ձայնագրություններ են բերվում։ Դա նկատել է Ա. Պետրոսյանը ևս, որը Ս. Տյովլեթյանի գրքի առաջաբանում հաստատում է թե՛ մեղ համար ... «խորհրդածության անսահման հորիզոն մը կը բանան Կարահիսարի աշուղները», նախապես ուշադրություն հրավիրելով Տյովլեթյանի հետևյալ խոսքերի վրա. «Իմ միտքս ինչ որ մնացած էր գրեցի. թե ինչո՞ւ գրեցի, որովհետև օր մը թուրքերը Սերվերին ալ (այս էր աշուղին կեղծանունը) իրենցմե պիտի դավանին, ինչպես ըրին ճարտարապետ Սինանի համար»¹⁵⁷։ Կարահիսարի ժողովրդական երգ-երաժշտության առումով Տյովլեթյանը շեշտը դնում է, մասնավորապես, պարերգերի վրա (մենապար և շուրջպար)։ Դրանց գրական տեքստերն է հառաջ բերում, երբ խոսքը վերաբերում է Կարահիսարի հարսանիքին¹⁵⁸։ և դրանց մեղեդիներն է, որ ներկայացնում է գլխավորապես, Ա. Մեսումենցի ձայնագրությամբ¹⁵⁹։ Ընդամին հեղինակը տեղեկացնում է, թե ներկայացվող նյութերը իմացել է մասամբ աշուղ Սեգյահից և մասամբ էլ հորից, և թե քաղաքիս լավ երգողներից ու պատմողներից է եղել հայրը ինչպես նաև մեծ հայրը, ու մասնավորապես պարերգերի մասին տալիս է հետևյալ կարևոր ծանոթագրությունը։ «Պարերգերը հին են, 1875-ին այդ եղանակներով կպարեն

եղեր։ Անկև վերջը նորություն դարձեր են թրքական և լազի պարերը»¹⁶⁰։ Կարահիսարի ժողովրդական երգերի գրական տեքստերի նմուշներ բերում է նաև Ա. Հայկազը։ Դրանց մեջ նույնպես աչքի են դարձում պարերգերը, շուրջպարերը («վարդավառի կիրակին»)։ Այստեղ նույնպես կա «Հունձքի երգը», նաև՝ սիրո և պանդխտության երգեր, բայց սրանք էլ ինչ-որ փշրանքներ են միայն։ «Մենք կուտանք՝ ինչ որ կրցինք ձեռք ձգել մեր բնաշխարհի ավերումեն լման 42 տարի վերջ...»¹⁶¹, զգուշացնում է հեղինակը։ Խոսելով աշուղների մասին, Տյովլեթյանը նախ գանգատվում է նրանց թրքախոսությանը ընդհանրապես։ «Հայ աշուղները շատ ու շատ են, — ասում է նա, — բայց ընդհանրապես թուրքերեն դրած են...։ Թուրքերեն գրած են, զոր օրինակ, աշուղներ նամի, Սերվերի, Հեյազ, Սաֆի, Բեհ-րի, Արիստակես, Բիդարի, Միհրի, Փեսենթի (դերասան Գմբեթյանի հայրը), Զմկածաղցի Ղուկաս, Ծրդնկացի Լիսանի, Սեգյահի և Փերիշան, որ նույն ատեն երգիծաբան էր։ Այս տաղասացներու հիանալի գործերը, դարձյալ կկրկենեմ, տաճկերեն ըլլալուն համար շատ առոտացված և թուրքերը յուրացուցած են»¹⁶²։ Բուն Կարահիսարի աշուղներից հեղինակը ծանրանում է հատկապես երկուսի՝ 19-րդ դարում գործած (և «Սուլթան Մահմուդի աշուղը եղած») Սերվերիի (Արիստակես Տուրիկյանի), և իր օրոք ապրած Սեգյահիի (Գաբրիել էվրենյանի) վրա։ ... «Իմ օրով կապեր Գաբրիել էվրենյանը, աշուղական անունով Սեգյահի։ Նշանավոր չութակահար էր և նույն ատեն սաղ և ուղ կածեր... վարպետ էր (նաև) ամեն տեսակ գործիքներ հորինելու (շինելու) արհեստին մեջ»։ Այստեղ է, որ հեղինակը խոսում է նաև արդեն հիշատակված թուրք բանաստեղծ Մեհմեդ էմին Բեյի մասին։ Բանաստեղծը ... «շատ կերթար Սեգյահիին մոտ։ Միշտ նվագել կուտար անոր, նույն ատեն կնոթագրեր իր և կարահիսարցի մյուս աշուղներուն բանաստեղծությունները։ Շատ բան գրի առած է այսպես։ Մեհմեդ էմին Բեյ մասնավորաբար կհետաքրքրվեր աշուղ Սերվերիի գործերով։ Ինչպես ըսի ... Սեգյահին կարգված էր այս վերջնույն թոռնուհիներեն մեկուն հետ և նշանավոր աշուղին գործերը իր մոտ կմնային։ Օր մը, սրճարանին մեջ, իմ ներկայություն, էմին Բեյ գրի առավ լուսահոգի տաղասացի լավագույն քառյակներեն հատվածներ։ Թուրք բանաստեղծը չկրցավ ըսպել

¹⁵⁶ Անդ, էջ 630 և 642։

¹⁵⁷ Տյովլեթյան Ա., Հուշեր Շաբին-Կարահիսարին. Փարիզ, 1954, էջ 5—8։

¹⁵⁸ Անդ, էջ 46—49։

¹⁵⁹ Անդ, էջ 209—218։

¹⁶⁰ Անդ, էջ 227։

¹⁶¹ Արամ Հայկազ, Շաբին-Կարահիսար ու իր հերոսամարտը, Նյու-Յորք, 1957, էջ 77—78 և 78—90։

¹⁶² Տյովլեթյան Ա., Նշված աշխատությունը, էջ 53։

ինքզինքը և հիացած բացականչեց. — Առաջին անգամն է, որ ես, մեր գրականության մեջ, զուտ թուրքերեն, այսպես սքանչելի քառյակներ կլսեմ: Աշուղ Սերվերի իր իսկ կյանքին վրա հորինած էր այդ քառյակները: Ես ալ ամբողջ գրի առած էի, բայց 1920-ի նահանջին ուրիշ շատ մը գիրքերու հետ ձգեցի Սարըգամիշի վերիշան գյուղը: Բարեբախտաբար տակավին միտքս մնացած են այդ գոհարները»¹⁶³:

Սեգյահին ինքն էլ հորինած է եղել գեղեցիկ երգեր և առհասարակ նա նույնպես հայտնի, սիրված ու հռչակված է եղել, թեև դա հպանցիկ կերպով նշում է Տյուվեթյանը: «Սեգյահին իհարկե մեծ աշուղն է (իմա Սերվերից) շատ տպավորված էր, բայց ինքն ալ հղացած էր գեղեցիկ բանաստեղծություններ: ... Հեքիաթային կյանք մը ապրած այդ մոգական դեմքը, որ աշուղ Սեգյահին էր եղած, ինքն ալ դուրս գալիս մարտի վերջին ահավոր օրերուն կգտնվեր բերդին մեջ»¹⁶⁴: Եվ հենց այստեղ էլ, ըստ բոլոր տվյալների, նահանատակվել է տաղանդավոր աշուղը, իր աշակերտի հետ միասին, դատելով Ա. Հայկազի խոսքերից: «Շաբին-Կարահիսարի աշուղները, մեր օրերուն երկուք էին, — հիշում է նա, — և կապրեին քաղաքին մեջ: Վարպետը՝ Աշուղ Սեգյահին էր, աշակերտը՝ Մեսթուրին (Գառնիկ Նուրիխանյան): Սեգյահի լուրջ ու պատկառելի մարդ էր, ջերմ հավատացյալ ու եկեղեցասեր: Լավ հայ էր: Չէր խնայում, չէր խմեր, զավակ չուներ, որը մը կպահեր իր տունը: Թուրքերն ու կառավարական պաշտոնյաները, որոնք իր արվեստը գնահատողներուն մեջ էին, կհարգեին զինքը: Իրմե շատ բան չէ մնացած, մնացածներն ալ թուրքերեն են: Իր աշակերտը, Մեսթուրին, տաճկերենի հավասար դյուրութեամբ հայերեն ալ կհորիներ ու կերգեր: Երկուքն ալ զոհ գացին 1915-ի ջարդերուն»¹⁶⁵: Շաբին-Կարահիսարցիների ուխտատեղիներից հիշատակենք Ս. Գևորգի վանքը՝ իր պարերով հայտնի Թամզարա գյուղի մոտ, այն... «որ հիսուն տարի առաջ (հաշվելով 1914-են) հրդեհի հետևանքով շատ կվնասվի, սակայն Պետրոս եպիսկոպոս Թահմիզյան... կվերանորոգե և ամալի վանքը ժողովրդյան սիրելի ուխտավայր կըլլա»¹⁶⁶, Երաժշտա-կրթական տեսակետից Շաբին-Կարահիսարը, ըստ երևույթին, չէ փայլած: Չնայած, որ այստեղ, Երկոտասան Առաքելոց

վանքում, Կարահիսարի առաջնորդներից Պետրոս Վ. Ներկարարյանը, 1880-ին... «ժառանգավորաց վարժարան մը կբանա»¹⁶⁷, Ինչ մակարդակի վրա էր այստեղ հոգևոր երաժշտության կատարումը: Դժվար է ասել: Որևէ հիշատակության չհանդիպեցինք նաև այն մասին, թե ինչ տեղ է բռնել, Կարահիսարի հայկական դպրոցներում, երգ-երաժշտությունը, եթե չհաշվենք Ա. Հայկազի հետևյալ տողերը, որոնք խնդիրը շոշափում են անուղղակիորեն: «Տարի մը... չգիտեմ ուրկե, տեսչության հրավիրեցին Ջալոմայր Ճերմակյան անուն անձ մը... անժպիտ դեմքով... Անոր վարչության օրով էր, որ սկսանք օրը սկսիլ ու փակել աղոթքով: Երբ «Երեկոյան մեր հառաչանքները կամ «առավոտյան թուխոց երգերը» հավաքական ձայնով «առ Աստված առաքելներ», խնդրելով որ իր իմաստությունը «ինչպես ի մարգ» իջնող ցողին պես մեր վրա իջնե, վստահ եմ որ Աստված ուր ալ որ եղած կամ պահված ըլլար, կլսել: մեր ձայնը, քանի որ 400 հոգիով, բաց յուրան ու րաց պատուհաններուն առջև կերգեինք...»¹⁶⁸:

Խարբերդի նահանգ: Սա պատմական Մոփքն է փաստորեն: Բայց այժմ ավելի ճիշտ է հատկապես «Խարբերդի նահանգ» անվանումը: Որովհետև վերջին հարյուրամյակների ընթացքում այն ընդգրկել է խոր անցյալում Կապադովկիային հարած, կամ Տիգրանավայրեր ևս: Այս նահանգի հայաբնակ մի շարք վայրերի (Պեհեսնի, Ատիաման, Մադկերտ և այլն) երգ-երաժշտության վերաբերյալ տեղեկություններ գրեթե չունենք: Շատ բան չէ, որ հայտնի է Չմշկածագի, Չնքուշի և Մալաթիո նման վայրերի մասին ևս: Դրությունը քիչ փոխվում է, երբ մոտենում ենք Արաբկիրին, Բալուին, Ակնին և բուն Խարբերդին:

«Չմշկածագի հայք ունին կարգ մը ժողովրդական երգեր», գրում է Մոցիկյանը: Եվ հիշատակելով մասնավորապես պարերգերը, սիրերգերն ու հովվերգերը, բերում է դրանցից մի քանիսի գրական տեքստերը¹⁶⁹: Չմշկածագիների մասին մեր նյութին ուղղակիորեն վերաբերող այլ տեղեկությունների չենք հանդիպում: Այս պայմաններում, սակայն, եթե որոնելու լինենք գեթ որևէ բան հուշող փաստեր, պետք է, անկասկած, հաշվի առնենք, որ Չմշկածագը շրջապատված էր մեկական եկեղեցի ու դպրոց ունեցող մոտ

¹⁶³ Անդ, էջ 56—58:

¹⁶⁴ Անդ, էջ 59—62:

¹⁶⁵ Արամ Հայկազ, Նշված աշխատությունը, էջ 45:

¹⁶⁶ Ոսկյան Է., Սեբաստիայի, Խարբերդի, Տիարե-թիրի և Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962, էջ 44—45:

¹⁶⁷ Անդ, էջ 44:

¹⁶⁸ Արամ Հայկազ, Նշված աշխատությունը, էջ 36:

¹⁶⁹ Ս. Մոցիկյան, Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947, էջ 503—505:

20 հայաբնակ դյուղերով (Մամաս, Կարմրի, Ագարակ, Մոր, Իշխան և այլն)։ Ե որ բուն Չմշկածաղի մեջ հայերը ունեցել են գմբեթավոր հոյակապ մի տաճար և ազգային երկսեռ մի վարժարան, իսկ քաղաքից դուրս՝ նաև սիրված այնպիսի ուխտավայրեր, ինչպիսիք լին հնադարյան Հոռմկլան և Խուշեի Ս. Գեորգյա վանքը¹⁷⁰։

Չմշկածաղին վերաբերող պակասը մի գուցե ինչ-որ չափով լրացնեն Չարսանճաղի հայոց մասին ձեռքի տակ եղած հատ ու կենտ փաստերը, որոնք այստեղ բերելը առանց այդ էլ տեղին պիտի լիներ։ «Գեղջկական սիրային հովվերգություններ կային,— հիշում է Գ. Երևանյանը,— գաղտնաբար սորվված ու նույն ձևով ալ երգված», ամենայն հավանականությամբ ակնարկելով՝ և հայոց լեզվի վրա տարածված երբեմնի սահմանափակումներին, և տեղի հայ իգական սեռի վիճակին, և վերջինիս երգաստեղծական անդիմազորավելի պահանջին, որ շահեկան է դարձնում վկայությունը։ Պակաս ուշագրավ չեն հեղինակի այն խոսքերը ևս, որոնցից կարծես բխում է, թե Չարսանճաղի հայությունը, լեզվապահպանման-ազգապահպանման նպատակներով, մեր հոգևոր երգերից գեղեցկագույնները հնչեցրել է նաև կենցաղում (տներում)։ «Մեր պապերը հոգեկան գոհացում ստացած են շարականներու տաղերով,— գրում է նա,— սրտանց երգած են «Առավոտ Լուսոն», «Սուրբ Սուրբն» ու հոգեպարար մեղեդիները»։ Իսկ «հարսանիքի կամ ուրախության ատեն, դավուլի ու գուռնայի հետ երգած ու պարած են թուրքերեն խաղեր, որոնք կկոչվեին մալյա, հաբեն»։ Պատկերը այս կամ այն չափով ամբողջանում է նրանով, որ Չարսանճաղում էլ «հայկական դարձերեն վերջ հորինված բոլոր ազգային երգերը կերգվեին, հատկապես՝ հեղափոխական երգերը»։ Ի վերջո հեղինակը առաջ է բերում մի քանի երգերի գրական տեքստերի նմուշներ էլ, որոնցից հիշատակելի է կաղանդի երգը¹⁷¹։

Չնքուշ՝ կապուտաչվի ու շիկահեր հայորդիների տարաշխարհիկ բնակավայրը ևս, գերծ չի մնացել թրքալեզու երգերի հորինման պատուհասից¹⁷²։ Բայց չնքուշիք էլ ունեցել են իրենց տեղական բարբառը, ու այդ բարբառով հորինված ժողովրդական երգեր ևս։ Դրանց գրական տեքստերից գտնե մի քանիսը իրենց նյութովն իսկ անմիջապես ուշադրություն են գրավում, ինչպես՝ առաջին

ձյունաթափին նվիրված երգը¹⁷³, ցավ ու ափսոսանք պատճառելով, մասնավորապես, կորած մեղեդիների կապակցությամբ։ Նկատանելի փաստ է, որ չնքուշիք ունեցել են այնպիսի նշանավոր մի ուխտատեղի, ինչպիսին էր Ս. Մինասի հին վանքը (ավանդույթյան համաձայն՝ Թադեոս առաքյալի ձեռքով հիմնված), և երեք եկեղեցի ու դրանց կից մեկական դպրոց, որոնցում լավ թե վատ պետք է դասավանդված լինեին մեր հոգևոր և ազգային երգերը։

Մալաթիո հայոց ժողովրդական երգի տեսակներից Ա. Ալպոյաճյանը հիշատակում է՝ նկատի ունենալով դրանց գրական տեքստերը՝ կեր ու խումի, մանկական, սիրային ու վիճակի խաղերը և եղերերգերը, բայց առանձնապես կարևորում է օրորոցայինները։ «Ժողովրդային ստեղծագործություն ամենեն սրտաբուխները օրորներն են,— գրում է նա,— որոնց անձանթ հեղինակները նախապես եղած են մայրերը»¹⁷⁴։ Մալաթիո հայերը ունեցել են նաև իրենց համբավվոր աշուղին։ «Մանոթ աշուղ մըն էր Թորոս Թաշճյան, կամ այլ անունով Թաշուղի, որ ժողովուրդին մեջ համբավ կվայելեր», վկայում է նույն հեղինակը։ «Թորոս Թաշճյան ուներ թուրքերեն լեզվով դրված բազմաթիվ ոտանավորներ, որոնք կերգվեին ժողովուրդին»¹⁷⁵։ Դատելով Ալպոյաճյանի խոսքերից, Մալաթիո հայոց մեջ երաժշտա-կրթական գործը ևս բավականին արդյունավետ է եղել, քանի ժողովուրդը, մասնավորապես 1908-ից հետո, լավ ընտելացել է ազգային «ծանոթ» երգերին, «որոնք ամեն տեղ մուտ գտած էին»¹⁷⁶։ Վերջապես, Մալաթիո հայտնի ուխտավայրերից Հ. Ոսկյանը հիշատակում է Անարծաթ բժշկաց վանքը, որը նույնիսկ աշուղական երգի նյութ է դարձել¹⁷⁷։

Դառնալով Արարկիրին նախ պետք է ասել, որ եղած տվյալների համաձայն, երաժշտականությունը հատուկ է եղել անգամ նրա յուրօրինակ բարբառի արտասանությանը՝ խոսակցական ելևէջին։ «Ուրիշ խիստ հատկանշական ձև մը,— գրում է Մոցիկյանը,— նկատելի է Արարկերցոց խոսակցության ու առողանության մեջ, Այն է, թե Արարկերցի հայք իրենց խոսակցության մեջ

¹⁷⁰ Անդ, էջ 508—509։

¹⁷¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961, էջ 1197։

¹⁷² Անդ, էջ 1207—1208։

¹⁷³ Անդ, էջ 1155։

¹⁷⁴ Հ. Ոսկյան, Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպեթի և Տրապիզոնի նահանգներում վանքերը, Վիեննա, 1962, էջ 108։

¹⁷⁰ Անդ, էջ 501—503։

¹⁷¹ Գ. Երևանյան, Պատմություն Չարսանճաղի հայոց, Բեյրութ, 1956, էջ 590—592։

¹⁷² Ս. Մոցիկյան, Նշվ. աշխ., էջ 509։

քիչ մը եղանակ, երգելու կերպ մը կղենն: Կերկարեն մասնավորապես իրենց խոսակցության մեջ եղած հարցումի մը վերջին բառի հետին վանկը, որ առհասարակ «նը»-ով մը կավարտվի: Այդ «նը»-ն «կը»-ի տեղ կգործածվի շատ անգամ: ... «Յինչու մի-նակ գաս նը»¹⁷⁸, Սեեռուն ուշադրության արժանի մի երևույթ էլ այն է, թե, ըստ Ս. Բախտիկյանի վկայության (որ խոսում է ոչ միայն բուն Արաբկիրի, այլև շրջակա հայ գյուղերի մասին ընդհանրապես՝ Ծագ, Ծապվար, էհնե, Հասկնի, Կրանի, Սաղմկա, Ամպրկա և այլն), Արաբկիրցիք, մասնավանդ իգական սեռը, դեռ փոքր հասակից մասնակցել են երգաստեղծության, հորինելով ինքնուրույն կերպով: «Արաբկիրցի աղջիկը իր այս (11—12) տարիքին մեջ բնագործեն կզգա սերը: Ամեն կիրակի ան պարապ է, եկեղեցի անգամ չերթար,— միայն տաղավարներուն արտոնված է ժամ զալ,— ուստի կհավաքվին, կմտնեն սենյակ մը, կգոցեն դռները, մարդոցմե հեռու, հոն կերգեն, կխոսին, կհյուսեն տաղերը՝ ձախողված սերերու վրա, սիրո քառյակներ (իրենց լեզվով մեհի), իրենց բառերով, անսեթևեթ խոսքերով, նույն ատեն անոնց կցելով եղանակ մը, հետևած իրենց հորինած հեյեհեհ կամ մեհիհեհ»¹⁷⁹: Այս փաստերից արգեն իսկ կարելի է հետևել, որ Արաբկիրը հարուստ պիտի լիներ ժողովրդական երգերով: Եվ իրոք, զրականության մեջ այդպես էլ արձանագրված է: «Ժողովրդական շատ մը երգեր ունին Արաբկիրի Հայք: Այս երգերեն ոմանք արդի աշխարհաբար լեզվով հորինված են: Այլք տաճկերեն բառերով խառն են: Տաճկերեն լեզվով երգեր ալ ունին, որոնց ոգին հայկական է: Նկատելի է, թե Արաբկիրցոց կարգ մը երգերը, դրացի Ակնցոց ժողովրդական երգերուն նմանությունները կներկայացնեն իրենց լեզվով, ոճով, կազմվածքով: Այս հարանմանությունն ավելի շատ աչքի կիյնա... մասնավորապես այն երգերուն մեջ, որոնք հյուսված են պանդխտության, սիրո, կարոտի վրա»¹⁸⁰: Ըստ բոլոր տվյալների, Արաբկիրն ու նրա շրջակայքը աչքի են ընկել առավելապես ծիսական ու տոնական երգերով և պարերով: «Տան մը մեջ մահ պատահելու պարագային, սգավոր ընտանիքին և ազգական, բարեկամ ու դրացի կանանց խմբերն երբեմն օրերով կնստեին, կուլային, պատշաճ ողբեր կերգեին հայերեն ու թուրքերեն

լեզվով...: Հարսանեկան հանդեսներն ևս կտևեին օրեր, գիշեր ցորեկ կատարվելով ուրախություններ, զվարճալի խաղեր, երգեցողություններ, նվագածություններ, պարեր և կերուխումներ»¹⁸¹: Անհրաժեշտ է նշել, որ հարսանեկան երգերի թվում եղել են, բացի հայերեն և թուրքերեն խաղերից, նաև այնպիսիներ, որոնք հայերենից թուրքերենի վերածվելու իրենց ընթացքի մեջ կարծես կես ճանապարհին են մնացել: «Հինգշաբթի օր,— դրում է Բախտիկյանը,— տղուն տունեն ալ կերթան, աղջկան հիննեն դնելու: Փեսային մոտ ազգականները, մոտ դրացիները—ընդհանրապես հարս, աղջիկ, փեսան շրջապատած զուռնայով, դեֆու, ճամփա կելլեն դեպի աղջկան տունը: Աղջկան տնեցիները, Լոր խնամիներուն նվագին ձայնը կառնեն, նվագով զանոնք դիմավորելու կելլեն: Եվ այնուհետև՝ «կնքամայրը հարսին մագերը կսանտրե ու հիննեն կղեն: Նվագածուները «Աղջիկ նա, նա, նա»-ին թուրքերեն մասը կերգեն...»: Իսկ երբ հարսի մաղերը սկսում են հյուսել՝ «զուլգ նվագները փոխադարձաբար կնվաղեն «Աղջիկ նա, նա, նա»-ին հայերեն մասը»¹⁸²: Արաբկիրցիների տոնական երգերի մասին եղած տեղեկությունները նույնպես, վերոբերյալների նման, ընդհանուր բնույթի են, բայց խոսում: «Տոնական օրերուն... Արաբկիրի տանիքները օդը կելլեն: ... Հարս, աղջիկ, տղա, կիններ ու շափահա մարդիկ, բոլորն ալ կխաղան, «կչելեն ու կզառնան»¹⁸³: Հատկապես Տեառնընդառաջին ու Վարդավառին նվիրված հետևյալ տողերից դժվար չէ հասկանալ, որ Արաբկիրում դրանց վերաբերող երգ-երաժշտությունը պահել էր իր հեթանոսական խորքը: «Տեառնընդառաջին ժողովուրդը իր հեթանոս հայրերուն օրերը կապրի, ամեն տանիք բոցավառ խարույկներ կբարձրացվին, ամեն բարձր անկյուններն բոցերը ուղիղ գծերով երկինք կուղղվին—կրակի պաշտամունք կա կարծես: ... Վարդավառի տոնեն շաբաթ մառաջ արաբկիրցիք, ընտանյոք, Անգի Զային եզերքը վրան զարկեր են: Ամեն երեկո հարսանեկան տոնախմբություն կա կարծես, ժողովուրդը վրաններեն դուրս եկած, լուսնի լուսով, պար կրոնեն...»¹⁸⁴: Պետք է ենթադրել, որ շեշտված կերպով հեթանոսական մի նկարագիր են ունեցել Արաբկիրցիների Համբարձման տոնակատարությունները ևս, որոնց և, ամենայն հավանականությամբ, վերաբերվել է Բախտիկյանի հիշատակած մեհիհեհի ու նաև

¹⁷⁸ Ս. Մոցիկյան, նշվ. աշխ., էջ 100:

¹⁷⁹ Ս. Բախտիկյան, Արաբկիր և շրջակա գյուղերը (Պատմա-ազգագրական համառոտ տեսություն), Բնյութ, 1934, էջ 79:

¹⁸⁰ Ս. Մոցիկյան, նշվ. աշխ., էջ 101:

¹⁸¹ Անդ, էջ 96—97:

¹⁸² Ս. Բախտիկյան, նշվ. աշխ., էջ 90—96:

¹⁸³ Անդ, էջ 58:

¹⁸⁴ Անդ, էջ 59 և 61:

հեյեցեցերի (—հայեցեցերի կամ հայրեցեցերի) մեկ կարևոր մասը (հայերեն, թե թուրքերեն)¹⁸⁵։

Արաբկիրի մասին խոսելիս հազիվ թե հնարավոր է անուշադրության մատնել դրականության մեջ հիշատակվող աշխատանքային մի քանի երգերի տեսակները՝ կապված ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային-արհեստավորական կյանքին։ Այս կամ այն շահով գյուղական աշխատանքների հետ առնչվող երգերից Բախտիկյանը նշում է՝ ձավար աղալու երգն ու աշնան հացը եփելու «նվազը»¹⁸⁶, իսկ արհեստավորական երգերից Մոցիկյանը հիշում է մանուսյագործների-երգերը միայն, թեև հայտնի է, որ Արաբկիրի գրեթե բոլոր արհեստավորները հայեր են եղել։ «Ավելի շատ մեծ թիվ մը կկազմեն ոստայանակները, որոնք կպատրաստեին կտավ, մետաքսեղեն, կերպասեղեն, Շատ տուններ իրենց վարի հարկը ունեին հորեք մանուսյագործական։ Գործողները իրենց ոտքերն... հորեքուն մեջ երկնցուցած, կշարժեին շարունակ, հորանդերը նստած, և ձեռներով մագոդ կնետեին ու կբռնեին, մեծ սանտրով մը մանածի թելերը գործվածքին վրա ավելցնելով, առավոտն մինչև իրիկուն։ Կերգեին ու կգործեին...»¹⁸⁷։ Աշուղական երգ ու նվագի բնագավառում ևս Արաբկիրը ունեցել է իր ավանդույթները։ «Արաբկիրի մեջ բանահյուս երգիչները և նվագածուները հայեր եղած են միշտ։ Այս հայ ժողովրդական երգիչները—աշուղները և նվագածուները, երգելու ու նվագելու համար կհրավիրվեին նաև թուրքերու կողմից, իրենց հարսանյաց և այլ ուրախ հարկերու միջոցներում»¹⁸⁸։ Արաբկիրցի ավելի նոր ու նաև հին «ասող» երգիչների՝ աշուղների կյանքից դրվագներ ու նրանց խաղերից փշրանքներ հավաքել է Ս. Բախտիկյանը։ Հին (ԺԹ դարի առաջին կեսի) «ասողներից» նա հիշատակում է՝ խրիկտարին (կամ Խսյանլըին՝ Հովհ. Սրգսյան) և Թուրափտարին (Առաքել Մանկիկյան)։ պատմում է նրանց՝ յոթ օր ու գիշեր տևած նշանավոր մրցության մասին. և այլն (սրանք հիմնականում երգել են թուրքերեն)։ Այնուհետև գալիս են Սել-Սեֆիլ և Տեր Մարկոս (քահանա) աշուղները և վերջապես նշանավոր կին աշուղ Պոյնյն Սուման¹⁸⁹, որ անգիր է իմացել եկեղեցական երգերի մեծ մասը, և որի հորինած խաղերը՝ երբեմն նույնիսկ քաղաքական տեսակետից սուր՝ դեռ 1895-ի կոտորածներից իվեր տարածում են գտել Արաբկիրում (ինչպես, օրինակ, քուրդերին ուղղված երգը, որով նա մեղադրել է նրանց, կոտորածներին մասնակցելու մեջ, և կանխատեսել՝ նաև նրանց գլխին գալիք փորձանքը)։ Ուխտագնացության մեծ սիրահարներ են եղել արաբկիրցիք։ «Գավառացիին համար, կրոնական և հոգեբանական տեսակետներով մեծ տեղ կգրավեն ուխտատեղիները, ուխտը»— հաղորդում է Բախտիկյանը և ավելացնում, որ քաղաքի մեջ են գտնվել՝ Ս. Գևորգը և Ս. Թագուհին, իսկ քաղաքից դուրս՝ Ա. Սարգիսը, Փիլիպոս Առաքել և Ս. Մամաս¹⁹⁰։ Սրանցից առավել կարևորը, ըստ Հ. Ոսկյանի, Ս. Սարգիսն է։ «Ամեն տարի Ս. Սարգսի տունին,—տեղեկացնում է նա,—ձմռան ցուրտ ու բուքին տեղի կունենա անոր ուխտագնացությունը, որուն իրենց մասնակցությունը կբերեն նույնիսկ շրջանին քյուրտերը»¹⁹¹։ Դժբախտաբար Արաբկիրի երաժշտա-կրթական վիճակը ուղղակիորեն լուսաբանող փաստեր մեզ չեն հասել։ Ամենայն հավանականությամբ, սակայն, այն մի չորոշ մակարդակ ունեցած պիտի լիներ։ «Արաբկիրի հայք դպրոցակսն տեսակետով ալ աչքի իյնող վիճակ մը ունեցած են», ըստ Մոցիկյանի։ «Անոնց դպրոցները մերթ բոլորած են խիստ փայլուն շրջաններ։ Անոնք կաահեին մեկ միջնակարգ ազգային մեծ վարժարան, զոր կկոչեին կեդրոնական, և չորս թաղային դպրոցներ, աղջկանց և տղայոց։ Արաբկիրահայք կազմակերպված էին ազգայնապես և ունեին մշակութական զանազան միություններ»¹⁹²։

185 Անդ, էջ 109։

186 Անդ, էջ 54—55։

187 Ս. Մոցիկյան, նշվ. աշխ., էջ 95։

188 Անդ, էջ 101։

189 Ս. Բախտիկյան, Արաբկիրցի աշուղներ, Բելուսի, 1943, էջ 7—29։

190 Ս. Բախտիկյան, Արաբկիրը և շրջակա գյուղերը, էջ 83—84։

191 Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 77։

192 Ս. Մոցիկյան, նշվ. աշխ., էջ 93—94։

(Շարունակելի)